

Ա. Ս. ՊՈՒԵԿԻՆԻ «ԿՈՎԿԱՍ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ  
ԱԼ. ԾԱՏՈՒՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Ա. Ժ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

1899 թվականին, երբ նշվում էր Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակը, հայ հասարակական և գրական կյանքում նրա ստեղծագործությունների նկատմամբ եղած հետաքրքրությունը էլ ավելի աճեց: Դրա դրսևորումներից մեկը եղավ «Քնար Պուշկինի» ժողովածուի հրատարակումը, որի 28 բանաստեղծություններից 25-ը թարգմանել էր Ալ. Ծատուրյանը: Իսկ ընդհանուր առմամբ նա Պուշկինից հայացրել է 30 ստեղծագործություն, որոնցից ամենահայտնին, իհարկե, «Կովկաս» բանաստեղծությունն է:

«Կովկասը» (1829թ.) Պուշկինի «Կովկասյան շարքի» ամենախոշոր կտավն է: Քառոտնյա քողաղոտային չափը, 11-12 վանկանի վեցտողանի տները տեքստին դանդաղ, հանդարտ ընթացք են տալիս: Ծատուրյանը թարգմանելիս ընտրել է բավական երկար՝ 15-վանկանի քառանգամ չափը (4+4+4+3), որի հետևանքով ամբողջ բանաստեղծության ծավալը աճել է 30 տոկոսով: Տարբեր է նաև հանգավորումը. ուսերենում՝ *аббacc*, հայերենում՝ *aa bb cc*: «Կովկասի» բնագիրը իր տաղաչափության շնորհիվ շատ երաժշտական է: Երաժշտական է նաև թարգմանությունը, բայց այստեղ ուրիշ մեղեդի է հնչում: Այդ ամենը պարզորոշ զգացվում է առաջին իսկ տնից.

Кавказ подо мною. Один в вышине  
Стою над снегами у края стремнины:  
Орел, с отдаленной поднявшись вершины,  
Парит неподвижно со мной наравне.  
Отселе я вижу потоков рожденье  
И первое грозных обвалов движенье.<sup>1</sup>

Ահա Կովկասն իմ ոտքի տակ: Ես մեն-մենակ վերևում  
Սպիտակափառ լեռան լանջին լուռ կանգնած եմ ու նայում.  
Ինձ պես բարձր, արծիվն հեռվում, դեպի եթեր վերացած՝  
Օդում հանգիստ սավառնում է՝ թևերն հզոր տարածած.  
Եվ տեսնում եմ ես այստեղից հեղեղատներ փրփրալից  
Ինչպես ծընվում, ինչպես ձյունի հյուսեր փըլչում սարերից<sup>2</sup>:

Բնագրում այս տան մեջ 3 նախադասություն կա, իսկ Ծատուրյանը թարգմանությունում 6 դիմավոր բայ է գործածել: Իհարկե, քերականական ձևերի վերարտահայտումը թարգմանության խնդիր է դառնում «Միայն այն դեպքում, երբ բնագրի քերականական ձևերի առանձին յուրահատկություններ որոշակի ռեակցիայի են կատարում, երբ թարգմանության նպատակն է դառնում ոչ թե այդ գծերի ուղղակի վերարտահայտումը, այլ դրանց դերի վերստեղծումը թարգմանության լեզվի համանման արտահայտության միջոցները գործածելու ճանապարհով»<sup>3</sup>: Դիմավոր բայերի քիչ լինելը բնագրում ինքնանպատակ չէ: I տան մեջ կա 3, II և III տներում՝ 4-ական, վերջինում՝ 6 բայ: Այսինքն, կա ռեակցիայի որոշակի աստիճանավորում: Առաջին երեք տների նկարագրական, հանդարտափոս ուրիշը, որը պայմանավորված է նաև

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս էդ. Ջրբաշյան, Պուշկինը և հայ բանաստեղծները, Եր., 1999, էջ 74:

<sup>2</sup> Ա. С. Пушкин. Полное собрание сочинений в десяти томах. Т. III, Л., 1977, с. 131.

<sup>3</sup> Ա. Ս. Պուշկին, Երկեր Ռինգ հատորով, հ. I, Եր., 1954, էջ 351:

<sup>4</sup> А. В. Федоров. Основы общей теории перевода. М., 1983, с. 171.

բայերի սակավությանը, կամաց-կամաց արագանում է՝ վերջում արդեն առաջացնելով ըմբոստության և պայքարի տրամադրություններ: Ծատուրյանը չի պահպանել ոչ միայն դիմավոր բայերի թիվը, այլև աստիճանականության սկզբունքը: I-ում, ինչպես նշվեց, թարգմանիչը գործածել է 6 բայ, իսկ այնուհետև՝ II-ում՝ 7, III-ում՝ 5, IV-ում՝ 11:

I տան մեջ կան մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք բնագրում չկան: Այսպես՝ IV տողում Ծատուրյանը парит неподвижно օրսիմորոնը չի կարողացել համարժեքով թարգմանել, այլ դարձրել է *հանգիստ սավառնում* է ու դեռ մի ամբողջ դերբայական դարձված էլ ավելացրել՝ *թևերն հզոր տարածած* երևի ցանկանալով արտահայտել անշարժ ճախրելու տպավորությունը: Իսկ потоков рождение-ն *փոփոխից հեղեղատները* չեն: Դրանք շատ ավելի ներքևում են հեղեղատ դառնում: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Պուշկինն ավելի բարձրից է նկարագրում Կովկասը, քան Ծատուրյանը:

Վերջին՝ И первое грозных обвалов движение նախադասության թարգմանությունում՝ *ինչպես ծնվում, ինչպես ձյունի հյուսեր փլչում սարերից, և՛ իմաստային, և՛ ոճական անճշտություններ* կան: Ծատուրյանը դիմել է նկարագրական, բացատրական թարգմանության, որն այստեղ ոչնչով չի արդարացվում, և որից տողի հանդիսավորությունը կորել է: Բացի այդ՝ ձյան հյուսը կամ ձյունահյուսը ձյան զանգվածեղ այն շերտն է, որ բարձունքից սահում, փլվում է ցած: Այնպես որ ձյան հյուսի հետ *փլչել* բայի գործածումը ավելորդ է:

Բանաստեղծության բոլոր տներն էլ ունեն ինքնատիպ կառուցվածք: II տունը, օրինակ, առանձնանում է պարագայական սկզբնակրկնությամբ:

**Здесь тучи смиренно идут подо мной;  
Сквозь них, низвергаясь, шумят водопады;  
Под ними утесов нагие громады;  
А там уже рощи, зеленые сени,  
Где птицы щебечут, где скачут олени.**

А там уж արտահայտությամբ սկսվում է նաև III տունը, և այս դեպքում արդեն գործ ունենք ոչ թե սովորական կրկնության, այլ նախաբերության հետ: Այսինքն՝ կրկնվող տարրն այս դեպքում կապում է պարբերության անդամները և ոտանավորին էլ ավելի հանդիսավորություն ու հնչեղություն է տալիս<sup>5</sup>: Ծատուրյանը այս բավականին բարդ ոճական կառույցը մասնակիորեն է կարողացել վերարտահայտել.

**Այստեղ ահա շա՛ր-շա՛ր ամպեր մեղմ սահում են իմ դիմաց.  
Գոռ ջրվեժներ նոցա նեղքում ու սլանում դեպի ցած.  
Եվ աղմուկով դիպչում այնտեղ լերկ ժայռերի կույտերին.  
Իսկ քիչ ներքև չոր մացառ է, մամուռ՝ կպած քարերին.  
Քիչ էլ այն կողմ ես տեսնում եմ կանաչ, թավուտ անտառներ,  
Որ վխտում են եղջերուներ, և ծըլվում թռչուններ:**

Իսկ III տունը Ծատուրյանը սկսել է *այնտեղ* բառով և կրկնության փոխարեն II տան հետ յուրատեսակ հակադրություն է ստեղծել (այստեղ- այնտեղ):

II տունը թարգմանելիս Ծատուրյանը ազատ է վարվել, բայց պետք է նշել, որ ավելացված բառերն ու արտահայտությունները զոնեն ոճական առումով իսկապես համարժեք են ընկալին: Օրինակ՝ тучи смиренно идут արտահայտությունը թարգմանված է *շա՛ր-շա՛ր ամպեր մեղմ սահում են* նախադասությամբ: Ծատուրյանը չի պահպանել անձնավորումը (смиренно идут), փոխարենը հավելված *շար-շար* բառը հանդիսավորություն է ստեղծում, ինչից որ զուրկ չէ ռուսերեն տեքստը: Նույն դերով հանդես է գալիս *գոռ* մակդիրը *գոռ ջրվեժներ* կապակցությունում (բնագրում՝ водопады): Հնչողության, ուրիշի տեսակետից համարժեք թարգմանություն ստանալու համար կարևոր է հետևել բնագրի նախադասության անդամների շարադասությանը, առավելապես ենթակա-ստորոգյալ հարաբերությանը: Համեմատության համար վերցնենք III տունը՝ աջ կողմում նշելով ենթակայի և ստորոգյալի շարադասությունը:

<sup>5</sup> Այդ մասին տե՛ս Գ. Մ. Գողոպյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 240-242:

А там уж и люди гнездытся в горах,	է-ս
И ползают овцы по злачным стремнинам,	ս-է
И пастырь нисходит к веселым долинам,	է-ս
Где мчится Арагва в тенистых брегах,	ս-է
И нищий наездник таится в ущелье,	է-ս
Где Терек играет в свирепом веселье.	է-ս

Այնտեղ արդեն չ' մարդիկը բուն են դրած սարերում,	է-ս
Եվ խաշները մեղմ մայրում են դալարախիտ վայրերում.	է-ս
Եվ խաշնարածն իջնում է ցած- դեպի ուրախ հովիտներ,	է-ս
Դեպի խաղուն Արագվայի կանաչագեղ, զով ափեր.	-
Եվ չքավոր ապաստակն է դարան մտնում կիրճի մեջ,	է-ս
Ու Թերեքի կատաղալից, զվարճ խաղին չկա վերջ:	ս-է

Բնագրի նախադասությունները շատ պարզ են՝ ենթակա, ստորոգյալ, տեղի պարագա կազմով: Կա նաև երկու տեղի պարագա երկրորդական նախադասություն, և երկուսն էլ սկզբվում են *где* բառով: Ու, չնայած այս ամենին, բանաստեղծության ուղիղ միապաղատություն չի զգացվում, որովհետև հեղինակը, ինչպես երևում է վերևում, հաճախ փոխում է ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: Նման շարադասական փոփոխություններ թարգմանությունում չկան (բացի վերջին տողից), բայց նրա ուղիղ էլ միաբնույթ չէ. չնայած տարբեր է բնագրի ուղիղից: Պատճառն այն է, որ Մատուրյանը չի պահպանել նաև նախադասությունների նույն կազմը և երկրորդական նախադասությունները: Այսինքն, բազմազանությունը ստեղծվել է այլ նախապահով:

III տան առաջին տողը, ինչպես նշեցինք, սկսվում է *а там уж* նախաբերությամբ, որը Մատուրյանը յուրատեսակ կառուցվածքային հակադրությամբ է թարգմանել: Այս կապակցությունը տեքստին է կապվում *и (և)* շաղկապով, որն այստեղ հուզական մեծ նշանակություն ունի. վեճ ու հպարտ բնության մեջ մտնում է մարդը, մարդկային կյանքը: Հետագայում ևս ցանկացած նոր անձի, երևույթի հանդես գալը կապվում է *и* շաղկապով: Կառուցվածքային այդ տարրը և շաղկապի միջոցով թարգմանությունում լիովին արտահայտված է:

Նախորդ տների հանդարտահոս պատումը, որը կառուցվածքայնորեն արտահայտվում էր նախադասության գլխավոր անդամների շարադասության իրար հաջորդող փոփոխությամբ, վերջին տան մեջ բոլորովին այլ ուղի է ձեռք բերում: Կառուցվածքով էլ այս տունը տարբերվում է մյուսներից. բնագրում գործողության երկու կատարող կա, 6 ստորոգյալ (հայերենում, ինչպես ասվեց, դրանք 11-ն են): Այստեղ շատ են մակդիրները, փոխաբերությունները, կա համեմատություն, որը, ի դեպ, Մատուրյանը վարպետորեն է թարգմանել. *как зверь молодой* որպես վայրագ մի կորյուն: Մակդիրների թարգմանության պատկերը հետևյալն է.

- голодная волна - քաղցած ալիքներ
- немые громады - լուռ քարափներ
- бесполезная вражда - ապարդյուն կռիվ տալ

Ինչպես երևում է համեմատությունից, Մատուրյանը այս խնդիրը հիմնականում հաղթահարել է: Սակայն այս տան մեջ ևս անհարկի բառահավելումներ կան: Եթե վերը նշված դեպքերում դրանք չէին առանձնանում բնագրի ոճից, ընդհակառակը, ինչ-որ տեղ ամբողջ թարգմանության ոճական համարժեքությանն էին նպաստում, այստեղ ուժեղ պատկերներ են ստեղծում: Այսպես՝ *завидешный* пищу из клетки железной դարձվածը թարգմանված է երկրորդական նախադասությամբ՝ որ վանդակից որս է տեսել, աչքը կոխել սև արյուն: Երկրորդ՝ աչքը կոխել սև արյուն ժողովրդախոսակցական դարձվածը բնագրում չկա, բայց այն ավելի է հզորացնում փոխաբերությունը: Նույն տան 4-րդ տողում Մատուրյանը ավելացրել է *ял* բառը, և դրանից Թերեքի կատաղությունն ու անհանդուրժողականությունը ավելի է մեծացել.

И лижет утесы голодной волной...  
Եվ յուր քաղցած ալիքներով ծայրեր լիզում ու լալիս...

\* Այս մասին տե՛ս А. Д. Григорьева, Н. Н. Иванова, Язык лирики XIX в., М., 1961, էջ 70-77:

«Կովկաս» բանաստեղծությունում, ինչպես և իր հասուն շրջանի շատ գործերում, ի հայտ է եկել մեծ պոետի՝ գրական լեզվի արտահայտչականությունը և պատկերավորման համակարգը լիարժեք կերպով օգտագործելու կարողությունը: Տեքստը առաջին հայացքից անսովոր հասարակ տպավորություն է թողնում, չնայած իրականում հուզականորեն հագեցված է: Բանաստեղծության հանդարտ պատույժը ապահովվում է հիմնականում չեզոք բառապաշարի շնորհիվ: Այս բառաշերտն է նաև, որ թույլ է տալիս ավելի սուր զգալ ոճական գունավորում ունեցող բառերի կուտակումները, որոնք սփռված են բանաստեղծության մեջ՝ Դրանք հիմնականում բանաստեղծական և բարձր ոճի բառերն են, ինչպես նաև հնարանություններ: Այս բառաշերտի թարգմանության ժամանակ Մատուրյանը դիմել է փոխհատուցման մեթոդին: Այսպես, բանաստեղծական *стремина* և *громада* բառերը հեղինակը տեքստում գործածել է շահական անգամ: Բայց դրանց թարգմանությունները համարժեք չեն: *Стремина*-ն մի դեպքում դարձել է *լեռան լանջ*, երկրորդում՝ *դալարախիտ վայրեր*, թեև հայերենում կան նրան համարժեք *գահավանդ*, *վիճ* բարձր ոճի բառերը: Իմիջիայլոց, ոչ միայն այդ բառն է անճիշտ թարգմանված, այլև ամբողջ պատկերը:

### **И ползают овцы по злачным стреминнам...**

**Եվ խաշները մեղմ մայում են դալարախիտ վայրերում...**

Պուշկինի նկարագրած լեռներն ավելի դաժան են: Միշտ է՝ այստեղ մարդիկ են բնավորվել, բայց ոչխարները մի կերպ են սողում այդ լեռների վրա: Իսկ Մատուրյանի թարգմանությունը շատ ավելի հովվերգական է ստացվել:

Առանձնապես հաջողված չէ նաև *громада* բառի թարգմանություններից մեկը՝ *ժայռերի կույտեր* (մյուսը՝ *բարախները*, անշուշտ, համարժեք է): Ինչ-ինչ, բայց հայերենում լեռ ու սար նշանակող շատ բառեր ունենք՝ *բարածայր*, *լեռնակույտ*, *սպառած* և այլն: Վերը նշված բացթողումները, սակայն, այնքան էլ ակնբախ չեն, որովհետև թարգմանությունում բարձր ոճի բառերն ընդհանրապես շատ են, ինչպես՝ *սպիտակպիտ*, *խաղող*, *կատաղայից*, *կանաչագեղ*, *հեղեղատ* և այլն:

Հնարանությունները հնարանությամբ թարգմանելը մեծ վարպետություն է պահանջում թարգմանչից, մանավանդ միշտ չէ, որ այն լեզուն, որով թարգմանվում է, տալիս է այս հնարավորությունը: Օրինակ՝ *вогще, отселе* հնարաները ոչ միայն հանդիսավորություն են հանդրորում բնագրին, այլ նաև վկայում են այդտեղ բնակվող մարդկանց կենցաղի պահպանողականության մասին: *Вогще* բառը թարգմանվում է *սակայն ի՞դուր* իմաստային առումով համարժեք արտահայտությամբ: Իսկ *отселе-ն* ուղղակի *այստեղից*, թեև հայերենում ունենք գրաբարյան *աստ* համարժեքը, և այն կարող էր լիովին փոխարինել բնագրի հնարանությանը: Մի դեպքում է միայն Մատուրյանին հաջողվել հնարանությունը հնարանությամբ թարգմանել: Այսպես, *пастыр-ը* դարձել է *խաշնարած*: Այս տան մեջ թարգմանիչը գործածել է նաև *խաշն* հնարառը (բնագրում՝ *овец*): Վերջին դեպքը ևս պետք է յուրատեսակ փոխհատուցում համարել: Թարգմանությունում նույն դերով հանդես են գալիս *սապատակ* հնացած (բնագրում՝ *наездник*), *զվարն* (բնագրում՝ *свирепый*) հազվադեպ գործածվող բառերը:

Հայերեն տարբերակում շատ քիչ, բայց գրաբարյան բառաձևեր ևս կիրառել է Մատուրյանը, ինչպես՝ յուր, նորա, նորան: Հաստատապես չենք կարող ասել, թե դրանք հատուկ նպատակով են գործածված, որովհետև իր պոեզիայում ևս հաճախ են հանդիպում: Բայց ժամանակը այս դեպքում դրական դեր է կատարել: Այսօրվա ընթերցողը այդ բոլոր տարրերը գիտակցում է որպես ոճական հնարներ:

### **Ամփոփենք.**

1. Ամենամեծ անհամարժեքությունը բնագրի հետ տաղաչափության, մասամբ նաև կառուցվածքային, շարահասական հարցերում է: Բայց միաժամանակ չենք կարող չնշել, որ թարգմանությունն ունի, ճիշտ է բնագրից տարբեր, ուրույն ոճի՞ կայուն հանգավորում, ամբողջական կառուցվածք:

2. Պատկերային համակարգում ևս շեղումներ կան: Պուշկինի «Կովկասը» ավելի վեճ է, դաժան, կտրուկ պատկերներով, Մատուրյանի պատկերածը քիչ մեղմ է, հովվերգական՝ ավելի համապատասխան իր ընտրած տաղաչափական համակարգին:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 70-77:

3. Վերը նշված անհամապատասխանությունը, իհարկե, առաջին հերթին պայմանավորված է նաև որոշ բառերի չպատճառաբանված ոչ ճիշտ թարգմանությամբ: Հայերեն տարբերակում հանդիպում են նաև հավելված դարձվածքներ, արտահայտություններ, որոնք նպաստում են երբեմն ոճական համարժեքությանը, երբեմն պատկերային համակարգի ուժեղացմանը:

4. Բավականին հաջողված է պատկերավորման արտահայտչամիջոցների թարգմանությունը:

5. Ոճական համապատասխանությունը ևս ապահովված է. հնարանություններն ու ծովորդախոսակցական բառաշերտը թարգմանված են փոխհատուցման ճանապարհով: Սակայն համարժեքությունը ավելի շուտ ձեռք է բերվել բարձր ոճի բառերի առատության շնորհիվ: Ընդհանրապես թարգմանության լեզուն ճոխ է, գրական լեզվից համարյա առանց շեղումների (հազվադեպ իրողություն այդ շրջանի պոեզիայում):

6. Թարգմանության արժանիք պետք է համարել այն փաստը, որ «կովկասը» դարձել է մեր գրականության հարստությունը, երկար ժամանակ ընդգրկվել է դասագրքերում: Անշուշտ արժանիք պետք է համարել և այն, որ 19-րդ դարի վերջին կատարված թարգմանությունը կարող ենք վերլուծել, քննել այսօրվա թարգմանական շատ չափանիշներից ելնելով:

**А. Ж. МОВСИСЯН - Стихотворение А. С. Пушкина «Кавказ» в переводе Ал. Цатуряна.** - В статье перевод Ал. Цатуряна рассматривается с точки зрения метрического, лексического, композиционного и образно-художественного соответствия оригиналу. Если в отдельных случаях Цатурян отходит от подлинника, удлиняет размер, пропускает те или иные слова и обороты, а некоторые слова передает не совсем точно, то в целом он проявляет себя как истинный мастер поэтического перевода. Ему удается найти адекватные средства художественной выразительности, передать средствами другого языка стилистику пушкинского стихотворения, а самое главное то, что Цатурян смог создать на армянском языке полноценное художественное произведение. Неслучайно этот перевод многократно переиздавался, долгие годы включался в наши учебники, ибо он по праву вошел в сокровищницу армянской литературы.